

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԻԼԻԹ ՄԱՆՎԵԼԻ

**ՀԱԿԱԿՈՈՒՊՑԻՈՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Քրիստինե Յուրիի Բաղդասարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Արմեն Աշմատի Հակոբյան

տնտեսագիտության թեկնածու

Խաչատուր Թադևոսի Իգիթյան

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2022 թվականի հունիսի 14 -ին ժամը 14⁰⁰ -ին
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի
Տնտեսագիտության թիվ 014 Մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0025, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան փող.128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թվականի մայիսի 2-ին:

Տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



S.U. Մարտիրոսյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Կոռուպցիան գոյություն ունենալով ցանկացած հասարակության մեջ, ունի ընկալման տարբեր մակարդակներ, սակայն, ընդհանուր առմամբ այն բնորոշվում է որպես բացասական երևույթ: Իհարկե, բազմաթիվ հետազոտություններ են կատարվել ինչպես օտարազգի, այնպես էլ՝ հայազգի հետազոտողների կողմից՝ ուղղված կոռուպցիայի էությանը, գնահատմանը և հակակոռուպցիոն քաղաքականության իրականացմանը, սակայն, դեռևս կան մի շարք բացթողումներ, որոնք պատճառ են հանդիսանում կոռուպցիայի ձևավորման և հետագա զարգացման համար:

«Հակակոռուպցիոն գիտակցությունը» ինտեգրացիոն հասկացություն է, որն ուսումնասիրվում է տարբեր ակադեմիական հարթություններում, և, ըստ այդմ, էլ՝ այս հասկացության վերաբերյալ գիտելիքներն ընդհանրացնելիս հնարավոր է հասնել ուսումնասիրվող երևույթի ըմբռնման նոր մակարդակի, որն արտահայտում է մարդկանց վերաբերմունքը կոռուպցիայի՝ որպես սոցիալական չարիքի, նկատմամբ:

ՀՀ-ում կոռուպցիայի նվազեցման գործում հրատապ խնդիրներից են տնտեսական և ենթակառուցվածքային բարեփոխումները, հատկապես կոռուպցիայի խորացման պատճառների բացահայտումն և հակակոռուպցիոն հետևողական քաղաքականության իրականացումը՝ սոցիալ-տնտեսական ծանր հետևանքների նվազեցման համար:

Չնայած կոռուպցիան կանխելու և կոռուպցիոն գործելակերպը պատժելու բազմաթիվ և հաճախ հաջող բարեփոխումներին՝ երկրները, այդ թվում նաև՝ ՀՀ-ն, շարունակում են չհաղթահարել պետական և մասնավոր հատվածների կոռուպցիան, պայմանավորված մի շարք խնդիրներով, ինչպիսիք են՝ կոռուպցիայի ընկալման և կոռուպցիայի իրական մակարդակի անհամարժեքությունը կամ ապակողմնորոշումը և կոռուպցիայի չափազանց ընդհանրական գնահատումները, ինչն էլ բացասաբար է ազդում տվյալ երկրում հատկապես բնակչության ցածր եկամուտ ունեցող խավի կենսամակարդակի վրա:

Հետևաբար, կոռուպցիայի դեմ պայքարը լավագույնս կազմակերպելու համար անհրաժեշտ է տեղեկատվություն ունենալ վերջինիս առաջացման նախադրյալների մասին, վերանայել տնտեսության բոլոր հատվածներում գործող տնտեսական մեխանիզմներն ու լծակները, իրականացնել հետևողական քաղաքականություն, գործադրել կառավարման արդյունավետ գործիքակազմ, ուղղված՝ օրենսդրական, դատական և պետական կառավարման համակարգերում բարեփոխումների իրականացմանը և հակակոռուպցիոն մեխանիզմների ներդրմանը:

Թերևս, այս հիմնահարցերով էլ պայմանավորված է ընտրված թեմայի արդիականությունը և հրատապությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատման հիմնախնդիրները և այդ նպատակի իրագործման համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել հակակոռուպցիոն մեխանիզմների էությունը, և դրանց վրա ազդող գործոնները,
- վերլուծել հակակոռուպցիոն մեխանիզմների պետական կարգավորման մեխանիզմները,

- բացահայտել պետական կառավարման համակարգում (գործադիր մարմին) կոռուպցիոն ռիսկերի առաջացման հնարավոր դեպքերը,
- առանձնացնել և համակարգել դեղերի շուկայում կոռուպցիոն ռիսկերի առաջացման մեխանիզմները, ինչպես նաև՝ մշակել հակակոռուպցիոն մեխանիզմներ պետությանը հասցված ֆինանսական և տնտեսական վնասների չափը նվազեցնելու համար:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ-ում կոռուպցիոն համակարգերի ուսումնասիրությունն է, իսկ հետազոտության առարկան՝ հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատումն է՝ սոցիալ-տնտեսական բացասական հետևանքները վերացնելու համար:

Հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել կոռուպցիայի ուսումնասիրության և գնահատման մեթոդաբանության վերաբերյալ ակադեմիական հանրության աշխատությունները, ՀՀ օրենսդրությունն ու ՀՀ կառավարության որդեգրած հակակոռուպցիոն քաղաքականության ծրագրերը:

Հետազոտությանն անհրաժեշտ տեղեկատվական հիմքերն են Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի, ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական տվյալներն ու հրապարակումները, Համաշխարհային բանկի, Թրանսպիերենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի, ՏՀԶԿ-ի կողմից հրապարակած զեկույցներն ու պաշտոնական վիճակագրությունը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական, համեմատական, էմպիրիկ, տնտեսաչափական վերլուծության, հարցումների մեթոդներ և գործիքներ:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Հետազոտության արդյունքում մշակվել և ստացվել են տնտեսական և գործնական նշանակության արդյունքներ, որոնցից հիմնականները հետևյալներն են՝

1. Բազմագործոն ռեգրեսիոն էկոնոմետրիկ մոդելի կիրառմամբ գնահատվել է պետական կառավարման համակարգում պաշտոնատար անձանց եկամուտների վրա ազդող կոռուպցիոն ռիսկերի չափը՝ առանձնացնելով կոռուպցիոն ռիսկի առաջացման դրդապատճառները հակակոռուպցիոն նպատակադրված քաղաքականության իրականացման համատեքստում:
2. Մշտադիտարկման արդյունքների հիման վրա բացահայտվել են ՀՀ-ում դեղագործության շուկայի մասնակիցների վարքագիծը՝ ուղղված կոռուպցիոն գործարքների իրականացմանը, ինչպես նաև մշակվել են հակակոռուպցիոն մեխանիզմի ֆինանսական գնահատման ռազմավարական քայլերը:
3. Հակակոռուպցիոն ռիսկերի ֆինանսական գնահատման արդյունքում բացահայտվել են ՀՀ-ում կոռուպցիայի, անվանական ՀՆԱ-ի, ժողովրդավարության, միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշների միջև գոյություն ունեցող կապը, ինչպես նաև մշակվել է կոռուպցիայի նվազեցման ձևաչափ՝ ուղղված ՀՀ-ում տնտեսական բարեկեցության բարձրացմանը:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը: Ատենախոսությունը գիտական հետազոտություն է, որից բխող եզրակացությունները և հետևությունները կարող են օգտագործվել այս հիմնախնդիրներով զբաղվող բոլոր շահագրգիռ մարմինների կողմից, ինչպիսիք են՝ ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման

հանձնաժողովի, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, կոռուպցիայի դեմ պայքարող հասարակական կազմակերպությունների, հակակոռուպցիոն պետական և ոչ պետական մարմինների և այս հիմնախնդիրներով զբաղվող հետազոտողների, ասպիրանտների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության հիմնադրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում, ինչպես նաև Թրանսփերենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի, Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի (ԲՀՀ) և ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի կողմից կազմակերպված «Հակակոռուպցիոն ակադեմիա» դասընթացի ընթացքում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 6 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության տեքստը շարադրված է 130 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, ներկայացվել է գիտական նորույթը, ստացված արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, տեսական և տեղեկատվական հիմքերը, փորձարկումներն ու հրապարակումները, ինչպես նաև ատենախոսության ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Հակակոռուպցիոն մեխանիզմների առաջացման նախադրյալները և դրանց տեսամեթոդաբանական գնահատման մոտեցումները» գլխում ներկայացված է «Կոռուպցիա» եզրույթն, որը գործնականում ի հայտ է եկել պետական կառավարման համակարգի ի հայտ գալուն զուգընթաց և բնորոշ է բոլոր ժամանակներին ու երկրներին:

Տնտեսագիտական գրականության մեջ առանձնացվում են կոռուպցիայի սահմանման երկու մոտեցումներ՝

1. Ըստ Համաշխարհային բանկի՝ «Կոռուպցիան պետական իշխանության չարաշահումն է՝ անձնական շահի համար»¹:
2. Ըստ «Թրանսփերենսի Ինթերնեյշնլ»² միջազգային հակակոռուպցիոն կենտրոնի կողմից տրված սահմանման՝ «Կոռուպցիա, իշխանության չարաշահում անձնական շահերի համար»:

Համաշխարհային բանկի բնորոշումը կենտրոնանում է մի կողմից պետական հատվածի (պաշտոնյաների) քաղծառայողներ, պաշտոնատար անձինք, քաղաքական

¹ "The World Bank" - www.worldbank.org.

² "Transparency International" - www.transparency.org.

գործիչներ, այսինքն՝ բոլոր նրանք, ովքեր որոշում են կայացնում այն մասին, թե ինչպես են ծախսվում պետական միջոցները) և մյուս կողմից մասնավոր շահերի միջև հարաբերությունների վրա:

«Թրանսփերենսի ինթերնեյշնլ» կազմակերպությունն ընդլայնելով այս սահմանումը, ընդգրկում է վստահված լիազորությունների ցանկացած չարաշահում, այսինքն՝ կոռուպցիա մասնավոր հատվածում (օրինակ՝ ընկերության բարձրաստիճան պաշտոնյայի կողմից բաժնետերերի վստահության չարաշահում): Կոռուպցիայի այս տեսակը, որը նաև կոչվում է կոռուպցիա մասնավոր հատվածում, գնալով դառնում է միջազգային քննարկման առարկա, մինչդեռ 1990-ականների սկզբին շեշտը դրվում էր մասնավոր և պետական հատվածների կոռուպցիոն հարաբերությունների վրա: Այսպիսով՝ «Թրանսփերենսի ինթերնեյշնլ» կազմակերպության և Համաշխարհային բանկի կողմից բերված կոռուպցիայի սահմանումներում ընդունված է, որ ակտը որակվի կոռուպցիոն, եթե լինի անօրինական շահ: Ակտը կորակվի կոռուպցիոն այն ժամանակ, երբ պատասխանատու անձը կամ կողմը ընդունում է ապօրինի վարձատրություն, առավելություն է ստանում կամ խախտում է շահերի բախման քաղաքականությունը: Նման առավելությունը կամ պարզևր կարող է լինել ինչպես փողի տեսքով, այնպես էլ՝ ցանկացած այլ օգուտի տեսքով:

«Հակակոռուպցիոն գիտակցություն» հասկացությունը ինտեգրացիոն հասկացություն է, քանի որ այն ուսումնասիրվում է տարբեր ակադեմիական հարթություններում, և, ըստ այդմ՝ այս հասկացության վերաբերյալ գիտելիքներն ընդհանրացնելիս հնարավոր է հասնել ուսումնասիրվող երևույթի ըմբռնման նոր մակարդակի: Հակակոռուպցիոն գիտակցության մակարդակը, և, հետևաբար, հակակոռուպցիոն մշակույթը կախված է կոռուպցիայի ապակայունացնող ուժի՝ անհատի և հասարակության տեղեկացվածության աստիճանից:

1990-ական թվականների կեսերին միջազգային հանրությունը գիտակցեց այն, որ կոռուպցիան գլոբալ խնդիր է, և, ըստ այդմ, էլ՝ տարածաշրջանային ու գլոբալ միջկառավարական բազմաթիվ կազմակերպություններ սկսեցին ակտիվորեն աշխատել այս ուղղությամբ: Մասնավորապես, բոլոր երկրները միաժամանակ սկսեցին ակտիվորեն պայքարել կոռուպցիայի դեմ, ինչպես օրենսդրական, այնպես էլ՝ տնտեսական, սոցիալական և էթնիկ առումներով:

Ներկայումս ամենակոռումպացված տարածաշրջաններից են Արևելյան Եվրոպան և Կենտրոնական Ասիան: Ուստի, կոռուպցիայի բարձր մակարդակ ունեցող երկրներում անհրաժեշտ է իրականացնել հատուկ պետական հակակոռուպցիոն քաղաքականություն՝ ռազմավարության կամ ծրագրի մշակման և կիրառման տեսքով, որը կարող է հստակ ցույց տալ կառավարության առաջնահերթությունները և ապահովել դրանց իրականացման կարգապահությունը: Ըստ այդմ, միջազգային իրավական փաստաթղթերը կոռուպցիայի դեմ պայքարում սահմանել են հետևյալ գործառնությունները **(տես՝ գծապատկեր 1-ը)**:



Գծապատկեր 1.

Հակակոռուպցիոն գործառույթների սահմանումը արտերկրում³

Ատենախոսության երկրորդ՝ «Հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատման ուղղությունները ՀՀ-ում» գլխում ներկայացված են կոռուպցիայի դեմ պայքարի որակական գնահատման մեխանիզմ, որի նպատակն է բացահայտել դեղորայքային բիզնեսում կոռուպցիոն մեխանիզմներ, դրանց առաջացման ռիսկերը և ներկայացնել վերջիններիս նվազեցման գործնական քայլեր: Մշտադիտարկման արդյունքում ընտրվել են ՀՀ 400 դեղագործական ընկերություններ, ըստ այդմ, հարցումներից ստացված արդյունքները խմբավորվել են մեծամասնության և փոքրամասնության սկզբունքի հիման վրա:

Հակակոռուպցիոն ռազմավարության մշակման համատեքստում, աշխատանքում մշակվել են մոտեցումներ՝ ուղղված պետական կառավարման համակարգում պաշտոնատար անձանց վարքագծի հակվածությանը կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանը:

Առաջին մոտեցման համաձայն ՀՀ-ում աշխատավարձի տարեկան ծախսի մակարդակի և սպառողական գների ինդեքսի միջև գոյություն ունի էական կապ: Ըստ այդմ՝ առաջարկվել է հետևյալ բանաձևը՝

$$ASE_t = \beta_0 + \beta_1 CPI_t + \xi_t \quad (1)$$

որտեղ՝

$t = 1, \dots, p$

ASE_t –ն՝ աշխատավարձի տարեկան ծախսն է,

³ The Anti-Corruption Network for Transition Economies, OECD – 2006, <http://www.oecd.org/corruption/acn/> :

CPI_t-ը՝ սպառողական գների ինդեքսի արժեքն է (%),
 $\beta_0, \beta_1, \beta_n$ -ն՝ առաձգականության գործակիցներ են,
 ξ_t -ն՝ պատահական սխալի մեծությունն է:

(1) գծային մոդելի հաշվարկման համար իրականացվել է կոռելյացիոն վերլուծություն, համաձայն որի բացահայտվել է ընտրված գործոնի և սպառողական գների ինդեքսի դիպուկության աստիճանը: Հաշվարկների հիմքում որպես էկզոգեն փոփոխականներ դիտարկվել են 2018-2020 թթ. աշխատավարձի տարեկան ծախսի և սպառողական գների ինդեքսի վիճակագրական տվյալները տարեկան կտրվածքով: Արդյունքում՝ նշանակալից բացասական կապ է ստացվել աշխատավարձի տարեկան ծախսի և սպառողական գների ինդեքսի միջև՝ 0.95: Հետևաբար՝ իրականացված կոռելյացիոն վերլուծության արդյունքները հաստատում են այն, որ դիտարկվող գործոնի և սպառողական գների ինդեքսի միջև գոյություն ունի նշանակալից փոխկապվածություն (տես՝ աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1.

Ընտրված գործոնների միջև կոռելյացիոն արժեքները⁴

	ASE _t	CPI _t
ASE _t	1.000000	
CPI _t	-0.952130	1.000000

(1)-ի հիման վրա հիմնավորվել է, որ սպառողական գների աճը բերում է իրական աշխատավարձի նվազմանը, դա պայմանավորված է նրանով, որ գնողունակության մակարդակը իջնում է և ստացված աշխատավարձի «վճարունակությունը» նվազում է, ինչը հետագայում բերում է նաև մարդկանց այլ եկամուտներ ստանալու վարքագծի դրսևորմանը, մասնավորապես՝ կոռուպցիային:

Երկրորդ մոտեցում. Աշխատանքում կատարվել է վերլուծություն, համաձայն որի, գնահատվել են ՀՀ գործող իշխանության գործադիր մարմնի պետական պաշտոնյաների 2018-2020թթ. հայտարարագրված եկամուտները, աշխատավարձերը և այլ եկամուտները: Կատարված վերլուծության արդյունքում, բացահայտվել է, որ ՀՀ նախագահի հայտարարագրված եկամուտների և աշխատավարձի ցուցանիշների միջև գոյություն ունի էական կապ: Ըստ այդմ էլ՝ առաջարկվել է հետևյալ բանաձևը՝

$$Y_t = \beta_0 + \beta_1 \ln_t + \xi_t \quad (2)$$

որտեղ՝

$t = 1, \dots, p$

Y_t -ը՝ հայտարարագրված եկամուտն է, որը հաշվարկվել է տարվա սկզբի և տարվա վերջի հայտարարագրված եկամուտների տարբերության համաձայն (հազար դրամ),

\ln_t -ն՝ աշխատավարձի և այլ եկամուտների ընդհանուր հանրագումարն է (հազար դրամ),

$\beta_0, \beta_1, \beta_n$ -ն՝ առաձգականության գործակիցներ են,

ξ_t -ն՝ պատահական սխալի մեծությունն է:

⁴ Աղյուսակ 1-ը հաշվարկվել է հեղինակի կողմից Eviews 10 համակարգչային ծրագրի միջոցով:

(2) գծային մոդելի հաշվարկման արդյունքում բացահայտվել է ընտրված գործոնի և այլ եկամուտների դիսկոնտայնության աստիճանը, այսինքն՝ նշանակալի դրական կապ է ստացվել վերոնշյալ բանաձևում ներկայացված անկախ փոփոխականների միջև 0.99 (տե՛ս, աղյուսակ 2-ը):

Աղյուսակ 2.

Ընտրված գործոնների միջև կոռելյացիոն արժեքները⁵

	Y_t	\ln_t
Y_t	1.000000	
\ln_t	0.993509	1.000000

Բացի այդ, աշխատանքում կատարված վերլուծության արդյունքում, բացահայտվել է, որ << նախագահի աշխատակազմի անդամների հայտարարագրված եկամուտների և աշխատավարձի ցուցանիշների միջև գոյություն ունի էական կապ: Ըստ այդմ էլ՝ առաջարկվել է հետևյալ բանաձևը՝

$$Y_t = \beta_0 + \beta_1 \ln_t + \xi_t \quad (3)$$

որտեղ՝

$t = 1, \dots, p$

Y_t –ը՝ հայտարարագրված եկամուտն է, որը հաշվարկվել է տարվա սկզբի և տարվա վերջի հայտարարագրված եկամուտների տարբերության համաձայն (հազար դրամ),

\ln_t –ն՝ աշխատավարձի և այլ եկամուտների ընդհանուր հանրագումարն է (հազար դրամ),

$\beta_0, \beta_1, \beta_n$ –ն՝ առաձգականության գործակիցներ են,

ξ_t – ն՝ պատահական սխալի մեծությունն է:

(3) գծային մոդելի հաշվարկման արդյունքում բացահայտվել է ընտրված գործոնի և այլ եկամուտների դիսկոնտայնության աստիճանը՝ -0.56 (տե՛ս, աղյուսակ 3-ը):

Աղյուսակ 3

Ընտրված գործոնների միջև կոռելյացիոն արժեքները⁶

	Y_t	\ln_t
Y_t	1.000000	
\ln_t	-0.567491	1.000000

⁵ Աղյուսակ 2-ը հաշվարկվել է հեղինակի կողմից Eviews 10 համակարգչային ծրագրի միջոցով:

⁶ Աղյուսակ 3-ը հաշվարկվել է հեղինակի կողմից Eviews 10 համակարգչային ծրագրի միջոցով:

Երրորդ մոտեցում. Կատարված վերլուծության արդյունքում, բացահայտվել է, որ ՀՀ վարչապետի և ՀՀ վարչապետի աշխատակազմի անդամների հայտարարագրված եկամուտների և աշխատավարձի ցուցանիշների միջև գոյություն ունի էական կապ: Ըստ այդմ էլ՝ առաջարկվել է հետևյալ բանաձևը՝

$$Y_t = \beta_0 + \beta_1 \ln_t + \xi_t \quad Y'_t = \beta_0 + \beta_1 \ln_t + \xi_t \quad (4)$$

որտեղ՝

$t = 1, \dots, p$

Y_t –ը՝ հայտարարագրված եկամուտն է, որը հաշվարկվել է տարվա սկզբի և տարվա վերջի հայտարարագրված եկամուտների տարբերության համաձայն (հազար դրամ), Y'_t –ը՝ հայտարարագրված եկամուտների տարեկան միջին ցուցանիշն է, որը հաշվարկվել է տարվա սկզբի և տարվա վերջի հայտարարագրված եկամուտների տարբերության համաձայն (տարեկան միջին ցուցանիշներ, հազար դրամ),

\ln_t –ն՝ աշխատավարձի և այլ եկամուտների ընդհանուր հանրագումարն է (հազար դրամ),

$\beta_0, \beta_1, \beta_n$ –ն՝ առաձգականության գործակիցներ են,

ξ_t – ն՝ պատահական սխալի մեծությունն է:

(4) գծային մոդելի հաշվարկման համար իրականացվել է կոռելյացիոն վերլուծություն, համաձայն որի բացահայտվել է ընտրված գործոնների և այլ եկամուտների դիպուկության աստիճանը: Ավելին, նշանակալից դրական կապ է ստացվել վերոնշյալ գործոնների միջև՝ 0.60 և 0.90 (տե՛ս, աղյուսակ 4-ը):


Աղյուսակ 4.

Ընտրված գործոնների միջև կոռելյացիոն արժեքները⁷

	Y_t	\ln_t		Y'_t	\ln_t
Y_t	1.000000			Y'_t	1.000000
\ln_t	0.604653	1.000000		\ln_t	0.902950
					1.000000

Հետևաբար, իրականացված կոռելյացիոն վերլուծության արդյունքում հիմնավորվել է, որ ելնելով պետական բյուջեում գործառնական ծախսերի ցուցանիշների դինամիկայից, պետական ապարատի պահպանմանն ուղղված ծախսերը ավելացել են պետական բյուջեում ընդհանուր եկամուտների ավելացումից և սպառողական գների փոփոխությունից անկախ (տե՛ս, գծապատկեր 2-ը):

⁷ Աղյուսակ 4-ը հաշվարկվել է հեղինակի կողմից Eviews 10 համակարգչային ծրագրի միջոցով:



Գծապատկեր 2.

2015-2020 թթ. պետական բյուջեի եկամուտների և գործառնական ծախսերի դինամիկան ՀՀ-ում⁸

Չորրորդ մոտեցում. Համեմատության համար աշխատանքում գնահատվել են Ռուսաստանի Դաշնության գործող իշխանության գործադիր մարմնի պետական պաշտոնյաների 2018-2020թթ. հայտարարագրված եկամուտներ, աշխատավարձերը և այլ եկամուտները:

Ըստ այդմ, աշխատանքում իրականացվել է կոռելյացիոն վերլուծություն, համաձայն որի բացահայտվել է ՀՀ կառավարության աշխատակազմի և ՌԴ կառավարության աշխատակազմի եկամուտների դիպուկության աստիճանը: Ավելին, նշանակալից դրական կապ է ստացվել վերոնշյալ գործոնների միջև 0.56 (**տե՛ս, աղյուսակ 5-ը**):

Աղյուսակ 5.

Ընտրված գործոնների միջև կոռելյացիոն արժեքները⁹

	IncArm	IncRus
IncArm	1.000000	
IncRus	0.560351	1.000000

MAX-MIN մեթոդի հիման վրա աշխատանքում հաշվարկվել ՌԴ գնաճի ցուցանիշի և ՀՀ գնաճի ցուցանիշի կապը, համաձայն որի, ՌԴ գնաճի ցուցանիշի լրացուցիչ 1.3% ավելացումը կարող է բերել ՀՀ գնաճի ցուցանիշի 12 տոկոսային կետի նվազեցմանը:

⁸ ՀՀ Վիճակագրական կոմիտե, տարեգիրք՝ 2021 թ. և 2020թ., «Ֆինանսներ», էջեր՝ 442-444, 450-451 և էջեր՝ 440-443, <https://www.armstat.am/file/doc/99526903.pdf>, <https://armstat.am/file/doc/99520963.pdf>:

⁹ Աղյուսակ 5-ը հաշվարկվել է հեղինակի կողմից EvIEWS 10 համակարգչային ծրագրի միջոցով:

Ատենախոսության երրորդ՝ «Հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական ռազմավարության մշակման գերակայությունները և դրանց կիրառման անհրաժեշտությունը ՀՀ-ում» գլխում գնահատվել են կոռուպցիայի ընկալման, անվանական ՀՆԱ-ի, ժողովրդավարության, միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշները, համաձայն որի, բացահայտել է վերջիններիս միջև գոյություն ունեցող կապը:

Կոռուպցիայի նվազեցման համատեքստում կիրառվել են կոռուպցիայի գնահատման տարբեր մեթոդներ (Դ. Կաուֆման¹⁰, Վ. Տանզի¹¹), որոնցից առավել լայն կիրառություն է ստացել (5) բանաձևը՝

$$Corruption_{it} = f(Economic\ well-being_{it}, Democracy_{it}, Judicial\ system_{it}, Bureaucracy_{it}, Historical\ factors_{it}, Geographical\ factors_{it}) \quad (5)^{12}$$

որտեղ՝

i -ն՝ երկրին է,

t -ն՝ տարին է,

Corruption_{it} -ն՝ կոռուպցիայի ընկալման ցուցանիշն է,

Economic well-being_{it} -ն՝ տնտեսական բարեկեցության մակարդակն է (մեկ շնչին ընկնող ՀՆԱ),

Democracy_{it} -ն՝ ժողովրդավարության ցուցանիշն է,

Judicial system_{it} -ն՝ դատական համակարգի գնահատման ցուցանիշն է (դատական համակարգի զարգացումը կանխում է նաև կոռուպցիոն գործընթացների ընդլայնումը),

Bureaucracy_{it} -ն՝ բյուրոկրատիայի մակարդակն է,

Historical factors_{it} -ն՝ պատմական գործոններն են (սոցիալ-մշակութային երևույթները),

Geographical factors_{it} -ն՝ աշխարհագրական գործոններն են (իշխանության կենտրոնացման գործոնի հետ միասին):

Ելնելով (5) բանաձևից աշխատանքում առանձնացվել են կոռուպցիայի առաջացման հիմնական պատճառները, և, ըստ այդմ՝ իրականացվել է բազմագործոնային վերլուծություն, որը ներկայացվել է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$Cor_t = \beta_0 + \beta_1 GDP_t + \beta_2 Dem_t + \beta_3 AMNS_t + \xi_t \quad (6)$$

որտեղ՝

t = 1, ..., p,

Cor_t -ն՝ կոռուպցիայի ընկալման ինդեքսն է ըստ Ֆրիդոմ Հաուսի,

GDP_t -ն՝ անվանական ՀՆԱ-ն է, շուկայական գներով (մլն. դրամ),

Dem_t -ն՝ ժողովրդավարության ցուցանիշն է ըստ Ֆրիդոմ Հաուսի,

AMNS_t -ն՝ միջին ամսական անվանական աշխատավարձն է (դրամ),

β₀, β₁, β₂ -ը՝ առաձգականության գործակիցներ են,

¹⁰ Kaufmann Daniel, 1997b, "Corruption: Some Myths and Facts," An early version was published in Foreign Policy, Summer 1997, pp. 14-131.

¹¹ Tanzi Vito, 1998, "Corruption Around the World: Causes, Consequences, Scope and Cures," forthcoming as an IMF Working Paper, Washington: International Monetary Fund.

¹² Shang-Jin Wei, "Corruption in Economic Development: Beneficial Grease, Minor Annoyance, or Major Obstacle?," Harvard University and National Bureau of Economic Research.

ՋԺ–ն՝ պատահական սխալի մեծությունն է:

(6) մոդելի համաձայն, աշխատանքում իրականացվել է թեստավորում (պարամետրերի գնահատում) փոքրագույն քառակուսիների եղանակով: Հաշվարկների հիմքում որպես էկզոգեն փոփոխականներ դիտարկվել են 2005-2021թթ. ներկայացված ցուցանիշների վիճակագրական տվյալները տարեկան կտրվածքով¹³: Մինչ մոդելի գնահատելը վիճակագրական տվյալները գծայնացվել են՝ հաշվարկելով դրանց լոգարիթմական արժեքները: Ըստ ռեգրեսիոն մոդելի գնահատման արդյունքների F վիճականին և Prob (F)-ը վկայում են, որ հավասարումը վիճակագրորեն նշանակալի է 1% արժեքականության մակարդակում ($F > F_{կրիտ.}$, $F=22.77$ և $F_{կրիտ.}=4.34$): Մոդելում $H_0 : \beta_1 = \beta_2 = \dots = \beta_{p-1} = 0$ վարկածը մերժվել է արժեքականության 1% մակարդակում¹⁴:

Ելնելով գնահատման արդյունքներից, կարելի է եզրակացնել, որ դիտարկվող գործոնների և կոռուպցիայի միջև գոյություն ունի նշանակալի փոխկապվածություն: Ճշգրտված դետերմինացիայի գործակիցը հավասար է 0.8032, այսինքն՝ կախյալ փոփոխականի (կոռուպցիայի չափ) վարիացիայի 80.32%-ը բացատրվում է ռեգրեսիայի մոդելում ներառված GDP_t , DEM_t և $AMNS_t$ փոփոխականներով, իսկ մնացած 19.68%-ը՝ պատահական սխալներով¹⁵:

Աղյուսակ 6.

Կոռուպցիայի, անվանական ՀՆԱ-ի, ժողովրդավարության և միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշների հաշվարկային արդյունքները¹⁶

Բացատրող փոփոխականներ	Գործակից	t-վիճականի	Prob.	Ճշգրտված R ²
Հաստատում	-2.484028	-1.340895	0.2029	0.803246
GDP_t	-0.291474	-1.690412	0.1148	
DEM_t	0.477647	1.835337	0.0894	
$AMNS_t$	0.426859	3.203043	0.0069	

(6) գծային ռեգրեսիայի մոդելի հիման վրա ստացել ենք գնահատված գործակիցներով հետևյալ մոդելը.

¹³ Աշխատանքում դիտարկվել են 2005-2021թթ. կոռուպցիայի, անվանական ՀՆԱ-ի, ժողովրդավարության, միջին ամսական անվանական աշխատավարձի տարեկան վիճակագրական տվյալները, քանի որ ժողովրդավարության և կոռուպցիայի ընկալման ցուցանիշները, ըստ Ֆրիդոմ Հաուսի, հաշվարկվել են 2005 թվականից սկսած, իսկ տվյալ ցուցանիշների մասով եռամսյակային տվյալներ ևս չեն հրապարակվում:

¹⁴ Մոդելում $n=17$, $p=4$, $\alpha=0.05$ արժեքականության մակարդակի դեպքում $v=0.95$, $k_1=3$, $k_2=13$, Ֆիշերի բաշխում ունեցող պատահական մեծության փնտրվող կրիտիկական արժեքը՝ $F_{կրիտ.}=4.34$:

¹⁵ Магнус Я.Р., Катышев П.К., Пересецкий А.А., Эконометрика. Начальный курс: Издательство "ДЕЛО" Москв, 2004, с. 67.

¹⁶ Աղյուսակ 6-ը հաշվարկվել է հեղինակի կողմից Eviews 10 համակարգչային ծրագրի միջոցով, որտեղ t-վիճականին և Prob.(t)-ն ցույց են տալիս, որ մոդելում գնահատված գործակիցները վիճակագրորեն նշանակալի են 1% արժեքականության մակարդակում:

$$\text{Cor}_t = -2.484028 - 0.291474\text{GDP}_t + 0.477647\text{Dem}_t + 0.426859\text{AMNS} + \xi_t \quad (7)$$

Այսպիսով՝ (7) տնտեսաչափական մոդելի արդյունքում հիմնավորվել է՝


- ՀՆԱ-ի ցուցանիշի (GDP_t) մեկ տոկոսային կետի աճը բերում է կոռուպցիայի մակարդակի (Cor_t) 0.29 տոկոսային կետի նվազման, ինչը իրականում պետք է հակառակը լիներ:

- Ժողովրդավարության ցուցանիշի (Dem_t) մեկ տոկոսային կետի աճը բերում է կոռուպցիայի մակարդակի (Cor_t) 0.47 տոկոսային կետի ավելացմանը: Փորձը ցույց է տալիս, որ բոլոր երկրներում ժողովրդավարությունը բերում է կոռուպցիայի նվազմանը, ինչը հիմնավորվում է նրանով, որ ինչքան բարձր է ժողովրդավարության մակարդակը, այնքան ավելի ցածր են կոռուպցիոն ռիսկերը: Սակայն, ՀՀ-ում եթե անգամ ժողովրդավարության մակարդակը ավելանում է, այն չի բերում կոռուպցիայի մակարդակի նվազմանը, քանի որ վերջինիս վրա ազդում են այլ գործոններ և ինչքան էլ պետական կառավարման համակարգում շարունակաբար իրականացվում են բարեփոխումներ ինպատակ ժողովրդավարության մակարդակի բարձրացմանը, այնուամենայնիվ, այդ քաղաքականության իրականացման արդյունքում շարունակում են գոյություն ունենալ կոռուպցիոն ռիսկեր և ստվերային տնտեսություն:

- Միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշի (AMNS_t) մեկ տոկոսային կետի աճը բերում է կոռուպցիայի մակարդակի (Cor_t) 0.42 տոկոսային կետի ավելացման: Այսինքն, պետական կառավարման համակարգում աշխատավարձի բարձրացումը (նպատակադրված գնաճի դեպքում) հնարավորություն կտա պետական պաշտոնյաներին զերծ պահել կոռուպցիոն գործարքների նկատմամբ հակում ունենալու վարքագծից, հակառակ դեպքում կարող են կիրառվել վերահսկողության ռոբաստ գործիքներ:

Հակակոռուպցիոն մեխանիզմի արդյունավետ ֆինանսական գնահատման առումով՝ աշխատանքում մշակվել և ներկայացվել է ձևաչափ (**տես՝ գծապատկեր 3-ը**), համաձայն որի, հակակոռուպցիոն մեխանիզմի ֆինանսական գնահատման արդյունքում առանձնացվել են հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման առաջնային գործոնները, մասնավորապես, անվանական ՀՆԱ-ն, միջին ամսական անվանական աշխատավարձը և ժողովրդավարության մակարդակը, պայմանավորված՝ առանձին ենթակառուցվածքների կայացմամբ, որոնք էլ ուղղված են տնտեսական բարեկեցության բարձրացմանը:

Ըստ այդմ, տնտեսական բարեկեցության բարձրացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել առաջինը՝ ստվերի կրճատում, որը պայմանավորված է ոչ ֆորմալ եկամուտների հայտարարագրմամբ, երկրորդը՝ միջին ամսական անվանական աշխատավարձի բարձրացում՝ ոչ ֆորմալ զբաղվածության կրճատմամբ և հայտարարագրման սկզբունքի ներդրմամբ պայմանավորված, երրորդը՝ ժողովրդավարության մակարդակի բարձրացում՝ ուղղված ենթակառուցվածքների ակտիվ գործունեությանը: Հետևաբար, որպես ակտիվ հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գործիք, մեխանիզմներից յուրաքանչյուրը բերում է նշված ցուցանիշների բարձրացմանը, որն էլ բերում է արդյունավետ հակակոռուպցիոն մեխանիզմների ներդրմանը:



Գծապատկեր 3.

Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման գերակայությունները¹⁷

Կոռուպցիայի նվազեցման համատեքստում, ՀՀ դեղագործության շուկայում իրականացվող միջոցառումների արդյունքում համակարգելով կոռուպցիայի հավանական դեպքերի նվազեցմանն ուղղված միջոցառումները (տես՝ արդյուսակ 7-ը), աշխատանքում առաջարկվել է հիպոթեզ, համաձայն որի, հարցման ընդհանուր արդյունքների հիման վրա կատարվել է համամասնական բաշխում, մասնավորապես՝

Բաշխում 1. Հակակոռուպցիոն խիստ պատժամիջոցների կիրառում՝ 63%, որը նշանակվել է X-ով (X=63%) և առաջարկվել է բանաձև՝

$$X = \begin{pmatrix} X_1 \\ X_2 \\ X_3 \end{pmatrix} \quad (8)^{18}$$

որտեղ՝

X - ը՝ հակակոռուպցիոն խիստ պատժամիջոցների կիրառման ցուցանիշն է,

X₁ - ը՝ կոռուպցիայի համար ավելի խիստ պատժի կիրառման ցուցանիշն է,

X₂ - ը՝ հակակոռուպցիոն մարմնի ստեղծման ցուցանիշն է,

X₃ - ը՝ իշխանությունների կողմից քաղաքացիներին ծառայություններ մատուցելու բազմաֆունկցիոնալ կենտրոնների՝ «մեկ պատուհանի» սկզբունքով, ստեղծման ցուցանիշն է,

(8) բանաձևի համաձայն, հակակոռուպցիոն խիստ պատժամիջոցների կիրառման (63%-ի) դեպքում, հարցվածների 36%-ը գտնում է, որ կոռուպցիայի նվազեցման համար ավելի խիստ պատիժ պետք է կիրառել, հետևաբար, հաշվարկման արդյունքում ստացվում է, որ հարցվածների 57.1%-ը հակված է հակակոռուպցիոն խիստ պատժամիջոցների

¹⁷ Գծապատկեր 3-ը կազմվել է հեղինակի կողմից՝ գնահատված արդյունքների հիման վրա:

¹⁸ Բանաձևը հաշվարկվել է հեղինակի կողմից:

կիրառմանը, իսկ 42.9%-ը հայտնի չէ, թե հարցվածների որ խմբում է գտնվում (կա՛մ Y, կա՛մ X):

Աղյուսակ 7.

Կոռուպցիայի նվազեցմանը նպաստող միջոցներն ըստ հարցման արդյունքների¹⁹

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ					
1.	Կոռուպցիայի համար ավելի խիստ պատիժ	36%	1.	Ոչ մի միջոց չի օգնի, քանի որ մտածելակերպը հնարավոր չէ փոխել	24%
2.	Հակակոռուպցիոն մարմնի ստեղծում	15%	2.	Պաշտոնյաների, նրանց ընտանիքի անդամների ծախսերի նկատմամբ վերահսկողության ուժեղացում	4%
3.	Իշխանությունների կողմից քաղաքացիներին ծառայություններ մատուցելու բազմաֆունկցիոնալ կենտրոնների ստեղծում «մեկ պատուհանի» սկզբունքով	12%	3.	Կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության զանգվածային քարոզչություն	4%
			4.	Այլ	5%
Ընդամենը՝ 63%			Ընդամենը՝ 37%		

Բաշխում 2. Կոռուպցիայի դեմ պայքարում ոչ մի միջոց չի կարող օգնել՝ 37%, որը նշանակվել է Y-ով (Y=37%) և առաջարկվել է բանաձև՝

$$Y = \begin{pmatrix} Y_1 \\ Y_2 \\ Y_3 \end{pmatrix} \quad (9)^{20}$$

որտեղ՝

Y- ը՝ կոռուպցիայի դեմ պայքարում ոչինչ չի կարող օգնել ցուցանիշն է,

Y₁-ը՝ ոչ մի միջոց չի օգնի, քանի որ մտածելակերպը հնարավոր չէ փոխել ցուցանիշն է,

Y₂-ը՝ պաշտոնյաների, նրանց ընտանիքի անդամների ծախսերի նկատմամբ վերահսկողության ուժեղացման ցուցանիշն է,

Y₃-ը՝ կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության զանգվածային քարոզչության և այլ միջոցների կիրառման ցուցանիշն է:

(9) բանաձևի համաձայն, կոռուպցիայի դեմ պայքարում ոչ մի միջոց չի կարող օգնել 37% համամասնական բաշխման դեպքում, հարցվածների 24%-ը գտնում է, որ կոռուպցիայի

¹⁹ Աղյուսակ 7-ը կազմվել է հեղինակի կողմից կատարված հարցման արդյունքների հիման վրա:

²⁰ Բանաձևը հաշվարկվել է հեղինակի կողմից:

նվազեցման համար հնարավոր չէ ոչինչ անել, ուստի, հաշվարկման արդյունքում ստացվում է, որ հարցվածների 64.9%-ը հակված է նրան, որ նախ պետք է փոխել մարդկանց մտածելակերպը (որը փոխել հնարավոր չէ), հետո քայլեր ձեռնարկել կոռուպցիայի դեմ պայքարելու համար, իսկ 35.1%-ը հայտնի չէ, թե հարցվածների որ խմբում է գտնվում (կա՛մ X, կա՛մ Y):

$$X = \left\{ \frac{(36\% \times 100\%) + (27\% \times 57.1\%) + (13\% \times 35.1\%)}{100\%} \right\} = 56\% \quad (10)^{21}$$

$$Y = \{100\% - 56\% = 44\%$$

Հաշվարկելով (10) բանաձևը, X-ը ստանում ենք 56%, Y-ը՝ 44%, այսինքն՝ հակակոռուպցիոն քաղաքականության կիրառումը դեղորայքի ոլորտում (որի ընտրությունը հիմնավորվել է ատենախոսության 2.1 ենթագլխում) բերում է առավել մեծ արդյունավետության՝ կոռուպցիոն ռիսկերի հակվածությունը նվազեցնելու համար, իսկ 44%-ը հակված է մարդկանց վարքագիծը փոխելուն, հակակոռուպցիոն կրթության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացմամբ:

«Եզրակացություններ» բաժնում և դրանց հիման վրա աշխատանքում ներկայացվել են հիմնավոր առաջարկություններ և հասցեական միջոցառումներ, մասնավորապես՝

1. Հակակոռուպցիոն քաղաքականությունը լավագույն գործիք է կոռուպցիայի դեմ պայքարում, հատկապես այն երկրներում, որտեղ կոռուպցիան մեծ ծավալների է հասնում: Ըստ այդմ, հակակոռուպցիոն մշակույթի խթանման գործում կարևոր խնդիր է կոռուպցիայի նկատմամբ հասարակության շրջանում գրոյական հանդուրժողականության դիրքորոշման հաստատումը, կոռուպցիոն հանցագործությունների նկատմամբ ուժեղ անձեռնմխելիության ձևավորումը և հրապարակային դատապարտումը, ինչպես նաև հակակոռուպցիոն բարեփոխումները կրթության ոլորտի բարեփոխումներին ուղղելու անհրաժեշտությունը: Որն էլ ենթադրում է, որ հասարակության իրազեկության բարձրացումը մասնագիտացված հակակոռուպցիոն մարմինների խնդիրների և լիազորությունների մի մասն է կազմում: Այս ուղղությամբ իրականացվող միջոցառումների բացակայության դեպքում բնակչության շրջանում ավելի մեծ անհավատություն է առաջանում կոռուպցիան հաղթահարելու իրական կամքի նկատմամբ:

2. Հակակոռուպցիոն արդյունավետ քաղաքականության իրականացման համատեքստում հիմնական մարտահրավերները բարձր ռիսկային ոլորտների ուշադրության բացակայությունն է և առանցքային փաստաթղթերից քաղաքական կարևոր խնդիրների բացառումը: Չնայած այն հանգամանքին, որ բոլոր երկրներում հակակոռուպցիոն պլաններն ընդունվել են առանձին նախարարությունների և գերատեսչությունների մակարդակում, սակայն, դրանք հիմնված չեն եղել ռիսկի գնահատման վրա և հաշվի չեն առվել ոլորտային առանձնահատկությունները, բայց հետևել են «վերևից ներքև միջոցառումների վերաշարադրման» սկզբունքին:

²¹ Բանաձևը հաշվարկվել է հեղինակի կողմից:

3. Դեղագործության ոլորտի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ այն իր մեջ ներառում է առաջին անհրաժեշտության ապրանքներն և հետևաբար, այս ոլորտի սերտաճումը առաջին հերթին վնասներ է հասցնում սոցիալական հատվածին, մասնավորապես՝ բնակչության ցածր եկամուտներ ունեցող խավին: Եվ քանի դեռ այս մեխանիզմները ՀՀ-ում գոյություն ունեն և չկան ազատ մրցակցային պայմաններ, ուստի, այս ոլորտում շարունակական կլինի կոռուպցիոն ռիսկերի սերտաճումը: Աշխատանքում հիմնավորվել է, որ սպառողական գների աճը բերում է աշխատավարձի նվազմանը, ինչը պայմանավորված է նրանով, որ գնողունակության մակարդակը իջնում է և ստացված աշխատավարձի «վճարունակությունը» նվազում է, որն էլ հետագայում բերում է նաև մարդկանց այլ եկամուտներ ստանալու վարքագծի դրսևորմանը, մասնավորապես՝ կոռուպցիային: Բացի այդ, ելնելով պետական բյուջեում գործառնական ծախսերի ցուցանիշների դինամիկայից, պետական ապարատի պահպանմանն ուղղված ծախսերը ավելացել են պետական բյուջեում ընդհանուր եկամուտների ավելացումից և սպառողական գների փոփոխությունից անկախ:

4. Պետական կառավարման համակարգում պաշտոնատար անձանց հակվածությունը կոռուպցիոն գործարքների իրականացմանը, մշտապես եղել է և մնում է պետական կառավարման համակարգի հիմնական խնդիրներից մեկը և քանի դեռ առկա են վերոնշյալ գործոնները և դրանց վերացման ուղղությամբ դեռևս չկան հասցեական միջոցառումներ, ուստի, պետական կառավարման համակարգում կոռուպցիոն ռիսկերը մշտապես կարող են խաթարել տնտեսության բնականոն զարգացմանը:

5. Տնտեսական բարեկեցության բարձրացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել առաջինը՝ ստվերի կրճատում, որը պայմանավորված է ոչ ֆորմալ եկամուտների հայտարարագրմամբ, երկրորդը՝ միջին ամսական անվանական աշխատավարձի բարձրացում՝ ոչ ֆորմալ զբաղվածության կրճատմամբ և հայտարարագրման սկզբունքի ներդրմամբ պայմանավորված, երրորդը՝ ժողովրդավարության մակարդակի բարձրացում՝ ուղղված ենթակառուցվածքների ակտիվ գործունեությանը: Հետևաբար, որպես ակտիվ հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գործիք, մեխանիզմներից յուրաքանչյուրը բերում է նշված ցուցանիշների բարձրացմանը, որն էլ բերում է արդյունավետ հակակոռուպցիոն մեխանիզմների ներդրմանը:

6. Հակակոռուպցիոն ռազմավարության արդյունավետ իրականացման գլխավոր նախապայմանը պետական նպատակադրված քաղաքականությունն է՝ ուղղված կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանը, և գործուն մեխանիզմների կիրառմանը դրանց նվազեցման ուղղությամբ: Բացի այդ, գտնում ենք, որ հակակոռուպցիոն ռազմավարության արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն պետական կառավարման համակարգում կոռուպցիոն գործընթացների վերացմամբ, այլև՝ քաղաքացիական հասարակության գիտակցության բարձրացմամբ, պետություն-գործարար հատված փոխադարձ կապի թափանցիկության սկզբունքի ներդրմամբ և տնտեսական բարեկեցության բարձրացմամբ:

7. Աշխատանքում առաջարկվել է գործնականում կիրառել հակակոռուպցիոն ֆինանսական գնահատման մեխանիզմ, հետևյալ հաջորդական քայլերով՝

- ՀՀ դեղորայք ներկրող ընկերությունների տարեկան 3-5% հասույթի աճ ապահովելու դեպքում պարտադիր է ֆոնդային բորսայում ցուցակվելը «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքի համաձայն:
- ՀՀ դեղորայք ներկրող ընկերությունների ֆոնդային բորսայում ցուցակման ընթացակարգի հիմքերը ներկրվող դեղորայքի պաշարների գնահատումն է, ինչպես նաև դրա հետագա հաշվառումը: Դեղեր ներկրող ընկերությունները դեղորայքը ձեռք են բերում միջազգային մատակարարներից, որոնք իրենց հերթին ևս պետք է ցուցակված լինեն: Հակառակ դեպքում դեղորայքի շուկայում ստեղծվում են կոռուպցիոն ռիսկեր և ստվերային ապրանքաշրջանառություն:

Աւտենախոսութեան հիմնական դրոյթները հրապարակվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում`

1. Petrosyan Lilit Manvel, “Application of anti-corruption mechanisms in the field of pharmaceuticals of the Republic of Armenia”, “Polish journal of science”, № 48, VOL 1, Warszawa, Poland – 2022, ISSN 3353-2389, pp. 19-23.
2. Petrosyan Lilit Manvel, “Corruption assessment mechanisms. Analysis of international experience and opportunities for its application in Armenia”, “Znanstvena misel journal”, №63, VOL 1, Slovenia – 2022, ISSN 3124-1123, pp. 16-21.
3. Petrosyan Lilit Manvel, “Approaches to financial assessment of corruption risks affecting the income of officials in the public administration system in the RA”, “Colloquium-journal”, №9 (132), Część 1, Warszawa, Polska - 2022, ISSN 2520-6990, ISSN 2520-2480, pp. 42-44.
4. Petrosyan Lilit Manvel, “Directions for implementation of anti-corruption strategy and assessment of their consequences in RA”, “European research: innovation in science, education and technology/collection of scientific articles”, LXXVI international correspondence scientific and practical conference (London, United Kingdom, 2022), London - 2022 , ISBN 978-1-948507-04-2, pp. 9-12.
5. Պետրոսյան Լիլիթ Մանվելի, «Հակակոռուպցիոն մեխանիզմների էությունը, դասակարգման սկզբունքները և գործառույթները», «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ, որոնումներ, հեռանկարներ, լուծումներ» Գիտական հոդվածների ժողովածու - 1(4), Գ.Վ.Պլեխանովի անվան ՌՏՀ Երևանի մասնաճյուղի հրատ., 2021թ., էջ 320-327:
6. Պետրոսյան Լիլիթ Մանվելի, «Հակակոռուպցիոն կառուցակարգերի ձևավորման տնտեսական հիմքերը արտասահմանյան որոշ երկրներում», «ԳՊՀ 24-րդ գիտաժողով», գիտական հոդվածների ժողովածու 11, ք. Գավառ, 2021թ., էջ187-196:

ЛИЛИТ МАНВЕЛОВНА ПЕТРОСЯН

ПРОБЛЕМЫ ФИНАНСОВОЙ ОЦЕНКИ АНТИКОРРУПЦИОННЫХ МЕХАНИЗМОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 – “Финансы, бухгалтерский учет”.

Защита состоится 14-го июня 2022 года, в 14⁰⁰ часов на заседании Специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: Республика Армения, г. Ереван, 0025, улица Налбандяна 128.

АВТОРЕФЕРАТ

Цель и задачи исследования. Основной целью диссертационного исследования является выявление проблем финансовой оценки механизмов противодействия коррупции. Для решения этой цели рассмотрены следующие задачи:

- изучить сущность механизмов противодействия коррупции и факторы, влияющие на них;
- анализировать механизмы государственного регулирования противодействия коррупции;
- выявление возможных случаев коррупционных рисков в системе государственного управления (исполнительного органа);
- выявление и согласование механизмов коррупционных рисков на фармацевтического рынке, а также разработка антикоррупционных механизмов для снижения размера финансово-экономического ущерба государству.

Объект и предмет исследования. Объектом исследования является изучение коррупционных систем в Республике Армения, а предметом

исследования - финансовая оценка механизмов противодействия коррупции для устранения негативных социально-экономических последствий.

Основные научные результаты исследования и их новизна.

В ходе исследования разработаны и получены результаты как теоретического, так и практического значения, научная новизна которых заключается в следующем:

1. С помощью многофакторной регрессионной эконометрической модели проведена оценка степени влияния коррупционных рисков на доходы должностных лиц в системе государственного управления, выявление причин возникновения коррупционных рисков в условиях целенаправленной антикоррупционной политики.
2. По результатам мониторинга выявлено поведение участников фармацевтического рынка Республики Армения, направленное на осуществление коррупционных сделок, а также разработаны стратегические шаги по финансовой оценке антикоррупционного механизма.
3. В результате финансовой оценки антикоррупционных рисков выявлена взаимосвязь между показателями коррупции, номинального ВВП, демократии, среднемесячной номинальной заработной платы в Республике Армения, а также мера по снижению коррупции, направленная на повышение экономического благополучия в Республике Армения.

LILIT MANVEL PETROSYAN

**PROBLEMS OF FINANCIAL ASSESSMENT OF ANTI-CORRUPTION MECHANISMS
IN THE REPUBLIC OF ARMENIA**

The dissertation is submitted for pursuing of scientific degree of PhD of economics in the field 08.00.03 - " Finance, accounting ".

The defense of the disertation will take place on 14 June 2022, at 14⁰⁰ at the Meeting of the Specialized Council 014 in Economics of SCC of RA acting at the Armenian State University of Economics. Address: Republic of Armenia, Yerevan, 0025, 128 Nalbandyan str.

ABSTRACT

The Purpose and Objectives of the Research: The main target of the dissertation is to identify the problems of financial evaluation of anti-corruption mechanisms, and for the realization of that goal the following problems have been put to work and solved:

- study the essence of anti-corruption mechanisms and the factors influencing them;
- analyze the mechanisms of state regulation of anti-corruption mechanisms;
- identify possible cases of corruption risks in the public administration system (state body);
- identify and coordinate the mechanisms of corruption risks in the pharmaceutical market, as well as develop anti-corruption mechanisms to reduce the amount of financial and economic damage to the state.

The object and subject of the research. The object of the research is the study of corruption systems in the Republic of Armenia, and the subject of the research is the financial evaluation of anti-corruption mechanisms to eliminate the negative socio-economic consequences.

The Main Research Results and Scientific Novelty of the Dissertation.

In the course of the research, the results of theoretical and practical significance have been developed and obtained, the scientific novelty of which is as follows:

1. Using the multifactorial regression econometric model, the extent of corruption risks affecting the incomes of officials in the public administration system has been assessed, identifying the reasons for the emergence of corruption risk in the context of targeted anti-corruption policies.
2. Based on the results of the monitoring, the behavior of the participants of the pharmaceutical market in the Republic of Armenia has been revealed based on the implementation of the corrupt transactions, as well as the strategic steps for the financial evaluation of the anti-corruption mechanism has been developed.
3. As a result of the financial assessment of anti-corruption risks, the relationship between corruption, nominal GDP, democracy, average monthly nominal salary indicators in the Republic of Armenia has been revealed, based on reduction of the corruption measure to increase the economic welathbeeing in the Republic of Armenia.



